

ՍՈՒՐԲ ՂԵՂՈՆԴՅԱՆՑ ԸՆՄԱՀ ՀԻՋԱՏԱԿԻՆ

«Մահ իմացեալ՝ մահ է, մահ
ոչ իմացեալ՝ անմահութիւն
է».

«Որ զմահ ոչ գիտէ՝ երկնշի ի
մահուանէ; իսկ որ գիտէ զմահ՝
ոչ երկնշի ի մահուանէ»:

(ԵՎԻՇԼ ՊԱՏՄԱԴԻՐ)

Հազար հինգ հարյուր տարի է անցել
այն օրվանից, երբ հայ ժողովրդի քաջարի
հոգևոր հայրերի՝ Սուրբ Ղեղոնդյանց սրբից
այս սքանչելի պատճամը թռավ և սերունդ-
ների հիշողության մեջ նրանց անմահու-
թյան ուղին զծեց.

«Ով ընդունում է, թե մահ կա,
նա մեռած է, իսկ ով մահ չի ընդու-
նում, նա անմահ է».

«Ով չգիտե, թե ինչ է մահը, վա-
խենում է մահից, իսկ ով գիտե, թե
ինչ է մահը, չի վախենում նրանից»:

Բարոյական արիության այս դասը
տվեց, հերոսական այս ողին ներշնչեց հնա-
դարյան հայ ժողովրդին Հայոց Սուրբ
Եկեղեցու հոգևորականության՝ եպիսկո-
պոսների, քահանաների այն լուսաշող
երամը, որ քաջամարտիկ Սուրբ Ղեղոնդ
քահանայի անունով «Սուրբ Ղեղոնդեանը»
կոչվեց, որ քաջարար, հերոսաբար մեռնե-
լով անմահ մնացին ու իրենց սիրեցյալ
ժողովրդի անմահ անունը կտակեցին հետ-
նորդ սերունդներին:

Երախտագետ հայ եկեղեցին նրանց՝
իր անմահ հայրերին սրբերի դասը դասեց,

պաշտամունքի սեղան հանեց ու ցայսօր-
պաշտում է նրանց, տոնում նրանց հիշա-
տակը, նրանց մշտաբարբառ սուրբ պատ-
գամները, ոգեշնչում նրանց արիությամբ
ուխտելով նրանց հերոսական ճամբով
լիթանալ, մեռնել իր ժողովրդի պատու-
թյան համար ու արյան գնով հայրենիքը
պաշտպանել:

Հազար հինգ հարյուր տարիների խոր-
քից հնչում է նրանց անուշիկ ձայնը և
արձագանք գտնում հայ հավատացրաների
կրծքում: Ժամանակի հզոր ալիքը բյուրա-
վոր մարդիկ է գլորել հավիտենական մո-
ռացության ծոցը, բայց քաջարի սրբերը,
օթևանը երկինք, կանգուն են անշարժ:
հայ հավատացրալ, երախտագետ ժողովրդի
որտում:

Դեռ ևս չորրորդ դարում պարսից
թագավորը Հայաստանի մի մասն ու քրիս-
տոնյա հայերին քրիստոնյա Հունաստանից
հեռու պահելու և Պարսկաստանը դալիք
մեծ վտանգից ազատելու նախտակով,
փորձեց իր զոր բանակների արշավանքով
նվաճել Հայաստանը, քրիստոնեությունը
վերացնել այստեղից, կրակապաշտական
կրոնով կապել հայերին պարսից հետ:



ՊԵՏՈՆԻ ԵՐԵՑ

«Մի՛ բուլութեամբ լժանիցիմք, այլ պնդութեամբ սրտի և
հաստատուն հաւատովք կամակար յարձակեացում ի վերայ
քնշամեացն, որ յարձակեալ զան ի վերայ մեր»:

(Ե Դ Խ օ Ւ)

Հայոց քաջարի զորքը Մուշեղ Մամիկոնյան հերոս Սպարապետի զորավարությամբ դուրս եկավ պարսից մեծ բանակի դեմ։ Ճակատամարտի ընդարձակ դաշտում դեմ առ դեմ կանգնեցին պարսից և Հայոց բանակները։

Դաշտավայրի եղերքին կանգնած լեռնալանջում գահի վրա նստած Հայոց թագավորը դիտում է պատերազմի դաշտը։ Նրա կողքին ծնկաչոք, Սուրբ Ավետարանը և խաչը ձեռքին, Հայոց Սուրբ Հայրապետը աղոթում է Հայոց զորքի հաղթության համար։

Զորքի առաջ սպիտակ ձին հեծած, շողարձակ սուրբ ձեռքին կանգնած է սիրելի Սպարապետը, որի հրամանին է սպասում զորքը։

Հանկարծ Սպարապետի շողացող սուրբ բարձրանում է դեպի վեր։ Նա Հայացքն ուղղում է զորքին և որոտագին ճախով գոչում։ «Քաջանց ազգի գալակիներ, օ՞ն անդր, հառաջ, հանուն մեր սուրբ հավատի և Հայրենյաց, գրո՞ւ դաժան թնամութքա»։

Կաթսայում եռացող ջրի նման ոգելորդած զորքը թիկնադարձ Հայացքով նայում է սարալանջում բաղմած իր թագավորին, աղոթող ու խաչակնքող սուրբ Հայրապետի երեսին, խաչ է հանում և խնքը, շուր է գալիս դեպի սիրելի Սպարապետը և միաձայն աղաղակում։ «Կեցցե՛ Սպարապետը, մեր սուրբ հավատի և Հայրենիքի համար», և գրոհում է թշնամութքա։

Պարսից ահեղ բանակը բաղմաթիվ դիմակներ թողնելով ուղղաղաշտում, փախչում է և Հայոց փոքրիկ գնդերը ջարդելով նրան, քըում են մինչև պարսից սահմանը։

Հինգերորդ դարի կեսերն են։ Պարսից Հաղկերտ Երկրորդ կատաղի թագավորը իր պետության համար մեծ փտանգ կանխատեսելով Հայաստամից, որը հավատակից էր հունական պետությամ, վճռում է վերացնել քրիստոնեությունը Հայաստամի պարակահպատակ մասից, Հայոց եկեղեցի-

ները քանդել, կրակապաշտական տաճարների վերածել, Հայերին հավատով կապել կրակապաշտ պարսից հետ։

Հազկերտ թագավորի հրամանով նրա հազարապետ Միհրներսէը մի խիստ թուղթ է գրում Հայոց եկեղեցու եպիսկոպոսներին, պահանջելով որ ձեռք քաշեն քրիստոնեությունից, իրենց եկեղեցիները ատրուշաններ դարձնեն։ Արքայական այդ հրամանին կամ պետք է պատասխան տան կամ Պարսկաստան գնան արքայական ատյանին ներկայանալու։

Պարսից թագավորը բաղմաթիվ մոգեր է ուղարկում Հայաստան Վասակի և նրա զորքերի հետ միասին Հայոց եկեղեցիները կրակապաշտության աղոթատներ դարձնելու։

Առաջին փորձը տեղի է ունենում Անդլ դյուղաքաղաքում։

Կիրակի օր է, Ղևոնդ քահանան պատարագ է անում եկեղեցում, որը լիքն է աղոթող հավատացյալներով։ Քրմապետը դալաճան Վասակի և նրա հետ միացած դալաճան հայ իշխանների զորքի աջակցությամբ մոտենում է եկեղեցու դրան, հրամայում է ջարդել փակ զուռը, ներս խուժել և կրակի պաշտամունք կատարել։

Հայրենասեր Ղևոնդը պատարագն ընդհառում է, զինում աղոթողներին դագանակներով և հարձակվում քրմերի վրա և նրանց գլուխները ջարդելով փախցնում։

Մինչ դալաճան Վասակ Սյունին իր համախոհ իշխաններով ու զորքով Անդլի եկեղեցին քրմապետին հանձնելու անհաջող փորձն էր անում, լուր հասալ Հայաստան, թե Պարսկաստան կանչված և բանտարկված նախարարներն էլ ուրացել են իրենց հավատը, բանոից աղատվել և Հայաստան են վերադառնում։

Այդ լուրն առնելով ալեկոծվում է Հայաստանը, առանց իմանալու թե «Աստված և Հայրենիք» ըլրոշակն իրենց սրտերում կրող նախարարները Սպարապետ Վարդակոնյանի հետ միասին կեղծ ուրացությամբ միայն հարավոր էին համարել աղատվել բանտից և վերադառ-

նալ Հայաստան հայրենիքն ու Հավատը պաշտպանելու իրենց արյունով ընդդեմ Վասակի, նրա կողմանակից իշխանների և մոռերի:

«Հավատի և Հայրենիքի» գրոշակակիր քաջարի սուրբ եպիսկոպոսները կայծակի արագությամբ ցրվում են Հայաստանի դյուլ ու քաղաքները, լեռներն ու բերդերը հայ ժողովրդին ոտքի հանելու, իրենց արյունով պաշտպանելու համատն ու հայրենիքը:

Ամենուրեք արձագանք են զտնում քարոզները: Դավանող հայ ժողովուրդը՝ թէ կին, թէ աղամարդ այս արձագանքն էր տալիս:

Ճառ է ասում Ղեռնդ քահանան. «Թուլությամբ չհուսահատվենք, եղբայրներ, այլ ամուր սրտով, հոժարությամբ և հաստատով հավատով Հարձակվենք թշնամիների վրա, որոնք մեզ վրա են արշավում: Մենք կրկնակի հույս ունենք, եթե մեւնենք՝ կապրինք, անմահ կմնանք,



եթե մեռցնենք՝ մեղ կմնա մեր կյանքը...»

Հայրենասիրական ողով շիկացած, Հավատով հզոր քահանայի կոչին արձագանքում են զորքն ու ժողովուրդը:

Սկսվում է վերջին վճռական ճակատամարտը Տղմուտ գետի ափին, Ավարարի դաշտում: Վից առաջ Սամբկոնյանը ճառ է արտասառում զորքի, իրենց Հայրենիքին հավատա-

րիմ քաջ զորապետների առջե, հորդորում կովել արիարար հանուն Հայրենիքի և հանուն պատության օտար լծից:

Ավարայրի պատերազմը վերջանում է Հայրենիքի պաշտպան Վարդան Մամիկոնյանի, նրա մի քանի զորավարների և 1036 հայ քաջամարտիկների մահով: Այդ կովում պարսիկները մեծ ջարդ են կրում Հայերից:

Ամոթապարտ մնաց պարսից թագաւորությունը:

վորը, իսկ Հայաստանը՝ անընկճելի, հա-
յոց հավատն՝ անպարտելի:

Հաղկերտն հայ ժողովրդին կրոնափոխ
անելու անմիտ փորձից գաղաղած, դաշա-
րեցրեց պատերազմը և դատի կանչեց
Պարսկաստան թե ազգի դավաճան Վասա-
կին և թե պատերազմին շռւնչ ու հոգի
տվող հայ նախարարներին, եպիսկոպոսնե-
րին, քահանաներին՝ Ղեռնդի գլուխությու-
թյամբ:

Եղբայրակապ ու հետիոտն Պարսկաս-
տան են ստարվում Սահակ և Հովսեփ եպիս-
կոպոսները, հայրենասեր Ղեռնդ երեցը,
Մուչե, Արշեն, Սամվել քահանաները,
Քաջաջ և Արքահամ սարկավագները:

Արքայական ատյան, դատ ու դատաս-
տան:

Մերկացվում է երկերեսանի դավաճան
վասակը, որ հայոց նախարարներին
դաշտնի երբմնագիր էր տվել, թե նրանց
հետ կպաշտպանի հայրենիքը, իսկ արքա-
յին խոսք՝ թե իր կողմնակից իշխաններով
հայոց ժողովրդին կրակապաշտ կրաքանի
և Հայոց եկեղեցները քարուքանդ կամի:

Սուրբ Ղեռնդյանք քշլում են հեռավոր
Ապար աշխարհ և այնտեղ մեռնում իրենց
հավատի համար:

Դավաճան Վասակ Սյունին արքայա-
կան ատյանում հայոց ազնիվ, հայրենա-
սեր նախարարների և սուրբ Ղեռնդյանց
վկայություններով խայտառակարար մեր-
կարմանը է և բանտարկվում:

Այն օրվանից բազմաթիվ բանավորներ
մորեխի երամներով Հայաստան արշավե-
ցին, ավերեցին, հրկիղեցին մեր երկերը,
հայրենի հողը հայ ժողովրդի արյունով ներ-
կեցին, բայց Սուրբ Ղեռնդյանց և Վարդա-

նանց ոգով չնչված հայ ժողովուրդը իր ա-
րյան զնով, հերոսարար պաշտպանեց աննվա-
ճելի նվիրական Մայր հայրենիքը՝ Հայաս-
տան աշխարհը, նրա սուրբ տաճարները և
Մայր էջմիածինը, որը աշխարհասփյուռ
հայ ժողովրդի հայրենակարուտ սըր-
տերը հայրենիքի հետ անքակտելի կապող
ուսկեկապն եղավ մինչ այսօր, երբ մեր ժո-
ղովուրդը հասալ ազգային ազատության
և ապահովեց իր գիտության, արվեստի և
կուլտուրայի ծաղկումը չնորհիվ Սովետա-
կան մարդասեր, զզոր իշխանության և նրա
հերոս, իմաստուն ղեկավարների:

Այս օրերին, այս փառքին, այս ազա-
տության ու ապահովության հասցըին մեղ
սուրբ Ղեռնդյանց ողին, նքանց սուրբ
օրհնությունն ու աղոթքը, նրանց կերտած
հայրենասիրական սուրբ դրոշակը, նրանց
սքանչելի ավանդական դաստիարակու-
թյունները:

Զերմագին աղոթքով, երախտաղետ
սրտով օրհնենք սուրբ և անմահ Ղեռնդ-
յանց տոների հիշատակը, որոնց բարեխո-
սությամբ Տեր Հիսուս հովանի և պահա-
պան լինի մեր Սովետական մեծ Հայրենի-
քի Միութենական իշխանության, որի նշ-
րայրական ազգերի գույնզգույն գեղեցիկ
վիճի մեջ իր ալ կարմիր գույնով չողջո-
ղում է նաև Հայոց աշխարհը: Փառա-
պանծ կարմիր ու անընկճելի, զզոր, հե-
րոսական Բանակում այսօր իրենց հերո-
սությամբ փայլում են նաև Հայկի թոռ-
նիկները, Վարդանանց որդեգիրները ի
վառս Աստուծու և Հայրենիքի: Նրանց
փառք և պատիվ երախտագիտական ջերմ
զգացմունքներով: